

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

anna.asatryan@arts.sci.am

ORCID iD: 0009-0008-8359-8525

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-521

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԸ

Բանալի բառեր - Ավետիք Իսահակյան, Ռոմանոս Մելիքյան, երաժշտական իսահակյանապատում, «Զմրուխտի», «Շափաղ կուտաս»:

Ամփոփում

Հետազոտության նպատակն է Ավետիք Իսահակյանի և կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Ռոմանոս Մելիքյանի (1883-1935) միջև մարդկային ու ստեղծագործական շփումների ուսումնասիրությունը:

Նրանց ծանոթությունը տեղի է ունեցել 1904 թվականին Նոր Նախիջևանում: Այդ տարիներին Ռ. Մելիքյանը սովորում էր Ռոստովի երաժշտական ուսումնարանում:

Երկու երիտասարդների ծանոթությունը շուտով վերածվել է ջերմ բարեկամության, և երբ նույն թվականի հունիսին Վարպետը մեկնել է արտասահման, նրանց միջև կապը պահպանվել է նամակագրությամբ: Նամակներում կոմպոզիտորը բանաստեղծին հայտնել է նրա տեքստերի հիման վրա երգեր գրելու իր մտադրության մասին և խորհրդակցել որոշ հարցերի շուրջ:

Ավ. Իսահակյանն ու Ռ. Մելիքյանը կրկին հանդիպել են Թիֆլիսում՝ 1926 թվականին. կոմպոզիտորը եղել է բանաստեղծին դիմավորողների մեջ: Նրանց շփումները շարունակվել են մինչև 1930 թվականը՝ Ավ. Իսահակյանի արտասահման մեկնելը: Այս ընթացքում ստեղծվել է երաժշտական իսահակյանապատումի արժեքավոր էջերից մեկը՝ «Շափաղ կուտաս» երգ-ռոմանսը Ռ. Մելիքյանի «Զմրուխտի» շարքից: Իսահակյանի պոեզիայի հիման վրա գրված Ռ. Մելիքյանի այս միակ ստեղծագործությունն առաջին անգամ բանաստեղծի համար նվագել է ինքը՝ կոմպոզիտորը: Ավ. Իսահակյանը հուզված և երախտագիտությամբ համ-

բուրել է նրան: Դաշնամուրի նվագակցությամբ «Շափաղ կուտաս» մեներ-գը՝ «Զմրուխտի» շարքի 5-րդ երգը, առաջին անգամ հրատարակվել է 1928 թվականին:

1950-ին Իսահակյանը գրել է իր հուշերը Ռ. Մելիքյանի մահվան 15-ամյա տարելիցի կապակցությամբ, որը ներկայացվել է Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի կողմից՝ Ռ. Մելիքյանի հիշատակին կազմակերպված գիտական նստաշրջանում, իսկ հետագայում տպագրվել Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կողմից 1977 թվականին հրատարակված «Ռոմանոս Մելիքյան. Հոգված-ներ, նամակներ, հուշեր» ժողովածուում (էջ 89-92):

ANNA ASATRYAN

Doctor of Sciences (Arts), Professor

Institute of Arts of the NAS RA

anna.asatryan@arts.sci.am

ORCID iD: 0009-0008-8359-8525

AVETIK ISAHAKYAN AND ROMANOS MELIKYAN

Key words: Avetik Isahakyan, Romanos Melikyan, musical Isahakyaniana, “Emeralds”, song-romance “Shapakh kutas [You Flash Sparkles]”.

Abstract

The goal of the research is to study the personal and creative contacts of Avetik Isahakyan and the composer, choirmaster, pedagogue, musical and public figure Romanos Melikyan (1883-1935).

They got acquainted in 1904 in Nor Nakhijevan. At that period of time R. Melikyan was a student at the Rostov music school.

The acquaintance of the two young men shortly grew into warm friendship, which, however, was interrupted the same year because of the Master's departure abroad. They corresponded, and in his letters, the composer shared with the poet his intention to write songs on the latter's poems, asked advice on some other issues.

A. Isahakyan and R. Melikyan saw each other again in Tiflis in 1926: the composer was among those who went to meet the poet. They communicated

up until A. Isahakyan went abroad in 1930. In the meantime, one of the valued pages of musical Isahakyaniana was composed – the song-romance “Shapakh kutas [You Flash Sparkles]”, included in R. Melikyan’s series “Emeralds”. This piece – the only one written based on Isahakyan’s poetry – the composer played for the poet himself. Isahakyan was touched and gave a kiss of gratitude to him. The solo song “Shapakh kutas” – the 5th in the series “Emeralds” – with piano accompaniment was first published in 1928.

In 1950 Isahakyan wrote his memories on the occasion of the 15th anniversary of death of R. Melikyan. They were presented at the scholarly session in commemoration of R. Melikyan, organized by the section of history and theory of arts of the AS of Armenian SSR, and later, they were included in the collection “Romanos Melikyan: articles, letters, recollections” (pp. 89-92), published by Institute of Arts of the AS of Armenian SSR in 1977.

АННА АСАТРЯН

Доктор искусствоведения, профессор

Институт искусств НАН РА

anna.asatryan@arts.sci.am

ORCID iD: 0009-0008-8359-8525

АВЕТИК ИСААКЯН И РОМАНОС МЕЛИКЯН

Ключевые слова: Аветик Исаакян, Романос Меликян, музыкальная исаакяниана, «Изумруды», песня-романс «Шапах кутас [Горишь ты, роза]».

Аннотация

Цель исследования – изучение личного и творческого общения Аветика Исаакяна и композитора, хормейстера, педагога, музыкального и общественного деятеля Романоса Меликяна (1883-1935).

Они познакомились в 1904 году в Новом Нахиджеване. В эти годы Р. Меликян учился в Ростовском музыкальном училище.

Знакомство двух молодых людей вскоре переросло в теплую дружбу, которая, однако, прервалась в том же году по причине отъезда Исаакяна за границу. Они переписывались, и композитор в своих письмах поделился с поэтом намерением написать песни на его стихи, советовался по некоторым другим вопросам.

А. Исаакян и Р. Меликян вновь увиделись в Тифлисе в 1926 г.: композитор был среди встречавших поэта. Их общение продолжалось до 1930 г., когда А. Исаакян уехал за границу. В этом промежутке была создана одна из ценных страниц музыкальной исаакянианы – песня-романс «Шапах кутас [Горишь ты, роза]», вошедшая в цикл Р. Меликяна «Изумруды». Это произведение – единственное, написанное на основе текста поэзии Исаакяна, – первым сыграл для поэта сам композитор. Вздволнованный, А. Исаакян поцеловал его в знак признательности. Сольная песня «Шапах кутас» – 5-я в цикле «Изумруды» – в фортепианном сопрождении впервые была опубликована в 1928 г.

В 1950-м Исаакян написал воспоминания в связи с 15-й годовщиной смерти Р. Меликяна. Они были представлены на организованной Сектором истории и теории искусств АН Армянской ССР научной сессии в память Р. Меликяна, а впоследствии вошли в сборник «Романос Меликян: статьи, письма, воспоминания» (сс. 89-92), изданный Институтом искусств АН Армянской ССР в 1977 г.

Ներածություն

Բեղմնավոր ճանապարհ է անցել երաժշտական իսահակյանապատումը. դրա վկայությունն է 2006-ին Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի հրատարակած «Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ» տեղեկատուն, որն ամփոփում է Ավ. Իսահակյանի երկերի հիման վրա գրված 200-ից ավելի երաժշտական գործեր և բանաստեղծին նվիրված երաժշտական ստեղծագործությունները՝ գրված 1907-2004 թվականների ընթացքում (Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ, 2006: 4):

Իսահակյանի պոեզիան հիմք է դարձել տարբեր ժանրերի բարձրարժեք երաժշտական ստեղծագործությունների համար, որոնք ստեղծել են ինչպես բանաստեղծի ժամանակակից հայ և սփյուռքահայ կոմպոզիտորները, այդ թվում՝ Եղիշե Բաղդասարյանն ու Դանիել Ղազարյանը, Արմեն Տիգրանյանն ու Հարո Ստեփանյանը, Նիկոլ Գալանդեթյանն (Իրան) ու Գուրգեն Ալեմշահը (ԱՄՆ), Բարսեղ Կանաչյանն (Լիբանան) ու Սիրվարդ Գարամանուկը (Թուրքիա), այնպես էլ նրա մահից հետո, այդ թվում՝ Ալեքսանդր Հարությունյանը, Էդվարդ

Միրզոյանը, Էդգար Հովհաննիսյանը, Գևորգ Արմենյանը, Ավետ Տերտերյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, Լևոն Չաուշյանը, Արեգ Լուսինյանը և էլի շատ-շատերը...

Ընդ որում՝ այդ երգերից շատերը մեծ ժողովրդականություն են վայելում. բավական է նշել Դանիել Ղազարյանի «Քույր իմ նազելի» և «Գետակի վրա» երգերը...

Իսահակյանի բանաստեղծությունների ռուսերեն թարգմանությունների հիման վրա ստեղծվել են Սերգեյ Ռախմանինովի «Ночь в саду у меня...» ռոմանսը, Գեորգի Սվիրիդովի «Страна отцов» պոեմը տենորի ու բասի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ, Նիկոլայ Պելյույի «Мальчик с девочкой» ռոմանսը ձայնի և դաշնամուրի համար, Ռոստիսլավ Բոյկոյի «Весной» վոկալ շարը սոպրանոյի և դաշնամուրի համար, Անդրեյ Շտոգարենկոյի Սյուիտը «Ժողովուրդների բարեկամություն» շարից՝ երգչախմբի համար a cappella, Ալեքսանդր Դոլոխանյանի «Весельи пир» երգը ձայնի և դաշնամուրի համար, Սերգեյ Բալասանյանի «Չորս ռոմանս Ավ.Իսահակյանի խոսքերով» բարձր ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ, Սերգեյ (Սարգիս) Բարխուդարյանի ռոմանսների շարքը ևն:

Իսահակյանի պոեզիան հիմք է դարձել նաև ժողովրդական երգերի համար: Նշենք «Մայրիկիս», «Որսկան ախպեր», «Սիրեցի, յարըս տարան...», «Մաճկալ ես», «Սև-մութ ամպեր» և «Բինգյոլ» բանաստեղծությունների հիման վրա ստեղծված ժողովրդական երգերը: Այդ երգերից շատերը «կորցրել են» իրենց տեքստի հեղինակին, և երգողները վստահ են, որ տեքստը նույնպես ժողովրդական է: Իսկ հանրահայտ «Որսկան ախպեր» ժողովրդական երգի մեղեդին հետագայում օգտագործեց Արամ Խաչատրյանն իր հռչակավոր «Երկրորդ սիմֆոնիայում»:

Երաժշտական իսահակյանապատումի հարստացմանը զգալիորեն նպաստեց մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ 1975 թվականին կազմակերպված մրցանակաբաշխությունը՝ հետևյալ անվանակարգերում.

1. Սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ երաժշտություն
2. Խմբերգային երաժշտություն

3. Երգեր և ռոմանսներ:

Մրցանակները բաշխվեցին հետևյալ կերպ՝

«Սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ երաժշտություն» անվանակարգում՝

I մրցանակ – Էդգար Հովհաննիսյան՝ «Հայրենիքիս» վոկալ-սիմֆոնիկ պոեմ և «Աղբերս ու՞րա...» վոկալ-սիմֆոնիկ պոեմ

II մրցանակ – Ալեքսանդր Հարությունյան՝ «Քարավանը Աբու-Լալա-Մահարու» սիմֆոնիկ պատկեր

III մրցանակ – Արամ Սաթյան՝ «Սիրո երգ»

Յուրի Ղազարյան՝ Սյուիտ «Լիլիթ» բալետից

Վահրամ Բաբայան՝ Սիմֆոնիա

Հրաչյա Մելիքյան՝ Վոկալ-սիմֆոնիկ պրեյլուդ

«Խմբերգային երաժշտություն» անվանակարգում՝

I մրցանակ – Էմին Արիստակեսյան՝ «Գիշերն եկավ»

II մրցանակ – Գևորգ Արմենյան՝ «Է՛յ ջան – հայրենիք...»
խմբերգային կանտատ 7 մասից

Արամ Քոչարյան՝ «Լիրիկական»

Ռոբերտ Պետրոսյան՝ «Արարատի ծեր կատարին»

III մրցանակ – Ազատ Շիշյան՝ «Դեպի արև»

Յուրի Հարությունյան՝ «Անապատում, միրաժի մեջ մի բեղ-վին...». Երեք խմբերգ a cappella

«Երգեր և ռոմանսներ» անվանակարգում՝

I մրցանակ – չի շնորհվել

II մրցանակ – Լևոն Չաուշյան՝ Վոկալ շարք Ավ. Իսահակյանի
խոսքերով

Գեղունի Չթյան՝ «Լորիների տակ...»

Էդուարդ Աբրահամյան՝ «Ապրում եմ մենակ»

III մրցանակ – Մարտին Վարդազարյան՝ «Աշնան ծաղիկներ»

Արեգ Լուսինյան՝ «Նա մի փոքրիկ աղջիկ է՝ ...»

Խաչատուր Ավետիսյան՝ «Աշնան ծաղիկներ...»:

Նկատենք, որ այս ստեղծագործությունների մեծ մասը վրիպել է «Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ» տեղեկատու կազմողների ուշադրությունից: Այստեղ բերված հավաստի տվյալները վերցրել ենք Հայաստանի կոմպոզիտորների միության կողմից ծառայողա-

կան օգտագործման համար կազմված Տեղեկատուի 1975 թվականի 2-րդ համարից:

1975 թվականին՝ հոբելյանական տարում թողարկվեց ծայնասկավառակ, որում տեղ գտան Վարպետի խոսքերով գրված՝ տարբեր սերունդների հայ կոմպոզիտորների (այդ թվում՝ Ալեքսանդր Հարությունյան, Ռոբերտ Աթայան, Արեգ Լուսինյան, Հրաչյա Մելիքյան, Էդվարդ Միրզոյան, Գեղունի Զթյան և այլք) ռոմանսների ու երգերի, ինչպես նաև ժողովրդական երաժշտության նմուշների ծայնագրությունները:

Շարունակելով ավանդույթը՝ Վարպետի ծննդյան 150-ամյա հոբելյանի կապակցությամբ 2025 թվականի գարնանը Երևանի քաղաքապետարանը կազմակերպեց «Աբու-Լալա Մահարի» պոեմի հիման վրա վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործության մրցույթ, որում հաղթող ճանաչվեց կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի «Աբու-Լալա Մահարի» օպերա-օրատորիան (կամ՝ համերգային օպերա)՝ գրված բարիտոնի (ասմունքող), երկսեռ երգչախմբի ու սիմֆոնիկ նվագախմբի համար: Օրատորիայի պրեմիերան տեղի ունեցավ Ավետիք Իսահակյանի ծննդյան օրը՝ 2025 թվականի հոկտեմբերի 30-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի կատարմամբ՝ մասետրո Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ (մենակատարներ՝ Արման Առաքելյան և Տիգրան Հակոբյան):

Ուրախությամբ նշենք, որ այսօր էլ Ավետիք Իսահակյանի պոեզիան ներշնչանքի աղբյուր է ոչ միայն հայ երաժշտարվեստի անվանի ներկայացուցիչների, այլև երիտասարդ կոմպոզիտորների համար: Դրա վկայությունն է 2025-ին ստեղծված՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի կոմպոզիցիայի բաժնի ավարտական կուրսի ուսանող Արշակ Մուրադյանի «Աբու-Լալա Մահարի» օրատորիան՝ գրված Արամ Սաթյանի ղեկավարությամբ: Օրատորիան նույնպես ներկայացվել էր Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «Աբու-Լալա Մահարի» պոեմի հիման վրա վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործության մրցանակաբաշխությանը, բայց մտահոլացվել էր ու ստեղծվել մրցույթից անկախ:

Երաժշտական իսահակյանապատումի ուսումնասիրությունը մշտապես եղել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տեսադաշտում: Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը 1975 թվականին կազմակերպել է գիտական կոնֆերանս, որտեղ Ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր Մաթևոս Մուրադյանը հանդես է եկել «Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ», իսկ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Անահիտ Գրիգորյանը՝ «Ավետիք Իսահակյան և Հարո Ստեփանյան» զեկուցումներով:

Իսկ 2011 թվականի հունիսի 13-ին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի նիստում մեր գիտական ղեկավարությամբ տեղի է ունեցել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Արմեն Արմենակյանի «Ավետիք Իսահակյանի պոեզիան վոկալ երաժշտության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը: Ատենախոսության նպատակն էր որոշակի դասակարգմամբ և ընտրությամբ հետազոտել Ավ. Իսահակյանի բանաստեղծական տեքստերով ստեղծված վոկալ ստեղծագործությունները՝ հայ ժողովրդական երգերը, հայ, ռուս և սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունները, բացահայտել դրանց ինտոնացիոն, լադատոնայնական և լադահարմոնիկ, ինչպես նաև ոճական առանձնահատկությունները, բացահայտել դրանց կառուցվածքային տրամաբանության, շարադրման ընթացքի և ձևակառուցման առանձնահատկությունները, երաժշտական լեզվի բոլոր տարրերը դիտարկել բանաստեղծական տեքստի բովանդակության հետ հարաբերությամբ:

Թեև Ռոմանոս Մելիքյանը կյանքից հեռացավ շատ վաղ՝ ընդամենը 52 տարեկան հասակում՝ ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, սակայն թողեց անջնջելի ու խորը հետք հայ երաժշտության և երաժշտական կրթության պատմության մեջ, առհասարակ՝ Հայաստանի ու հայ ժողովրդի երաժշտական կյանքում: Բավական է նշել նրա մեծագույն վաստակը Հայաստանում երաժշտական բարձ-

րագույն, միջին-մասնագիտական ու միջնակարգ կրթության կազմակերպման գործում: Նրա ջանքերով և գործուն մասնակցությամբ 1921 թվականի դեկտեմբերի 22-ին Երևանում բացվեց Երաժշտական ստուդիան, որի հիմքի վրա 1923 թվականի հոկտեմբերի 1-ին՝ Ռ. Մելիքյանի ծննդյան օրը, իր գործունեությունն սկսեց Երևանի պետական կոնսերվատորիան: Երաժշտական ստուդիան հիմք դարձավ նաև Երևանի երաժշտական ուսումնարանի համար, որն այսօր կրում է Ռոմանոս Մելիքյանի անունը: Նրա ջանքերի շնորհիվ աշխարհի տարբեր ծայրերից Երևան տեղափոխվեցին և երաժշտական շինարարության գործին լծվեցին նշանավոր հայ կատարողները: Ջութակահարներ Ավետ Գաբրիելյանն ու Դավիթ Սողոմոնյանը ոչ միայն դարձան երաժշտական նորաստեղծ ստուդիայի, ապա՝ նորաստեղծ կոնսերվատորիայի դասախոսներ, այլև Երևանում ու Հայաստանում ծավալեցին համերգային ակտիվ գործունեություն:

Ռ. Մելիքյանը Խորհրդային Հայաստանում երաժշտական ինքնագործունեության առաջին ղեկավարներից ու կազմակերպիչներից էր, հրատարակչական գործի առաջին կազմակերպիչներից մեկը, Երևանի պետական օպերային թատրոնի առաջին երաժշտական խորհրդատուն (կոնսուլտանտ), բազմաթիվ երգչախմբերի կազմակերպիչն ու խմբավարը:

Ակտիվ հասարակական գործունեությունը, բնականաբար, ժամանակ չէր թողնում ստեղծագործական գործունեության համար: Այդ իսկ պատճառով՝ Ռ. Մելիքյանի ստեղծագործական ժառանգությունն իր ծավալով մեծ չէ և կապված է բացառապես վոկալ երաժշտության հետ: Նրա երգերն ու ռոմանսները, որոնք դարձան կոմպոզիտորի ստեղծագործության առաջատար ժանրերը, և որոնցում առավել լիարժեքորեն բացահայտվեց նրա տաղանդն ու հարմոնիկ լեզվի ինքնատիպությունը, բացառիկ նշանակություն ունեցան հայ երաժշտական մշակույթի համար: Արվեստագիտության դոկտոր, կոմպոզիտորի ստեղծագործության գիտակ, «Ռոմանոս Մելիքյան. կյանքը և ստեղծագործությունը» հիմնարար մենագրության հեղինակ Գևորգ Գյոդակյանի դիպուկ բնորոշմամբ՝ «հայ երաժշտության ասպետը հայ երաժշտության մեջ առաջինն էր, ում հաջողվեց ազգային երաժշտա-

կան արվեստում կիրառել հայկական պոեզիայի նվաճումները, մասնավորապես՝ Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի և հայ մյուս բանաստեղծների բանաստեղծությունները» (Геодакян, 2006: 150):

1904 թվական. Ռոմանոս Մելիքյանի և Ավետիք Իսահակյանի ծանոթությունը

Ռոմանոս Մելիքյանի և Ավետիք Իսահակյանի ծանոթությունը տեղի է ունեցել 1904 թվականի գարնանը՝ Նոր Նախիջևանում: Այդ տարիներին Ռ. Մելիքյանը սովորում էր Ռոստովի երաժշտական ուսումնարանում: Ինչպես հետագայում կհիշի Ավ. Իսահակյանը. «Առաջին վայրկյանից նա գրավեց ինձ. հրաշալի խոսակից էր՝ սրամիտ, հմայիչ իր ծայնով, իր բանաստեղծական շարժ ու ձևերով: Հազիվ 20-21 տարին անցած լինեք: Բարձրահասակ, գեղեցիկ, ճոխ մազերով» (Մելիքյան, 1977: 89):

Երկու երիտասարդների ծանոթությունը շուտով վերածվել է ջերմ բարեկամության: «Ամեն օր հանդիպում էինք իրար նոր-նախիջևանցիների հոջակավոր «Ասֆալդի» վրա, կամ պարտիզում: Հետը ման էր ածում մի լավ կրթված, խելացի շուն՝ ցեղային, բայց չեմ հիշում ինչ ցեղից: Աչքերը հառած Ռոմանոսին՝ սպասում էր իր տիրոջ հրամաններին. թաթերի վրա էր կանգնում, բարևում էր և այլն: Հետագայում ես չէի կարող պատկերացնել Ռոմանոսին առանց իր սիրելի շանը:

Մեծ հաճույք էր պատճառում նա ինձ, երբ ոգևորված խոսում էր իր ծրագրերի մասին – ուզում էր Կովկաս գնալ, շրջել հայկական գյուղերը, հավաքել մեր ժողովրդական երգերը, ուսումնասիրել, մշակել... և զարկ տալ հայկական ազգային երաժշտական արվեստի ամրացմանն ու զարգացմանը, որ նոր էր սկսված հանճարեղ Կոմիտասի շնորհիվ» (Մելիքյան, 1977: 89):

Չնայած իր երիտասարդ տարիքին՝ Ռ. Մելիքյանն արդեն նվիրվել էր հայ երաժշտության ծառայության գործին: Նրա պրոֆեսիոնալ երաժշտական գործունեության հաջող մեկնարկն արդեն տրվել էր: Իր «Ինքնակենսագրության» մեջ հետագայում նա կարձանագրի. «Իմ երաժշտական-հասարակական գործունեության սկիզբը հաշվում եմ

այն օրից, երբ 17 տարեկան՝ դեռ սեմինարիայի ուսանող, 1900 թ. հուլիսին կազմակերպում են հայրենի Ղզլարում երաժշտական հրապարակային առաջին համերգս իմ շարահյուսած և մշակած երգերից: Այդ թվից սկսած ես շարունակ աշխատել եմ մեր երաժշտական ասպարեզում իբրև կոմպոզիտոր, իբրև ուսուցիչ-մանկավարժ, իբրև ռեգենտ-խմբավար և ընդհանրապես եղել եմ հայ երաժշտական կյանքի կազմակերպողներից մեկը» (Մելիքյան, 1977: 209):

Շուտով՝ 1904 թ. հունիսին, Վարպետը մեկնում է արտասահման, և նրանք այլև չեն հանդիպում մինչև 1926 թվականը: Այդ ընթացքում նրանց միջև եղել է նամակագրություն, որտեղ կոմպոզիտորը բանաստեղծին հայտնել է նրա տեքստերի հիման վրա երգեր գրելու իր մտադրության մասին և խորհրդակցել որոշ հարցերի շուրջ: «Արտասահման եղածս ժամանակ մի-երկու նամակ ստացա Ռոմանոսից, որ հայտնում էր ինձ թե՝ ձեռնարկել էր իմ ոտանավորներից մի քանիսի ձայնագրմանը, և իմ հաճությունն ու խորհուրդն էր հարցնում: Ես մեծ սիրով պատասխանեցի նրան» (Մելիքյան, 1977: 90): Ցավոք, այդ նամակները չեն պահպանվել:

1926 թվական. Ռոմանոս Մելիքյանի և Ավետիք Իսահակյանի երկրորդ հանդիպումը

Ավ. Իսահակյանն ու Ռ. Մելիքյանը կրկին հանդիպել են Թիֆլիսում՝ 1926 թվականին. կոմպոզիտորը եղել է բանաստեղծին դիմավորողների մեջ: «Երբ 1926 թվին արտասահմանից վերադարձա Սովետական Միություն, Ռոմանոսը, նույնչափ սիրելի ընկեր արտիստ Իսահակ Ալիխանյանի և ուրիշ ընկերների հետ դիմավորեց ինձ Թիֆլիսի կայարանում, հետագայում կհիշի Իսահակյանը,- Կարոտով գրկեցինք իրար. անսահման ուրախ էի, որ վերստին իմ շատ սիրելի ընկերներին տեսա: Կարծես թե տարիներ չէին անցել, կարծես թե՝ երեկ էինք բաժանվել միմյանցից և շարունակում էինք տարիներ առաջ ընդհատված խոսակցությունները:

Թիֆլիսում ամեն օր Ռոմանոսի հետ էի: Նա արդեն հասունացած արվեստագետ էր. սիրված ու գնահատված: Սակայն նույն Ռոմանոսն էր, սքանչելի զրուցող, սրամիտ, խանդավառ» (Մելիքյան, 1977: 90):

Ի դեպ, Վարպետը Ռոմանոսին «Դոն» տիտղոսն էր տվել. «Դոն Ռոմանոս». այդպես էր կոչում նրան «թե՛ ըստ իր անվան, թե՛ ըստ իմ տպավորության՝ իսպանական ասպետական կոլորիտի և ոճի, շարժի ու կեցվածքի՝ նրա զարմանալի նույնության համար:

Մեր ընկերներից մի քանիսը յուրացրին այդ կոչումը: Ասեմ նույնպես, որ Ռոմանոսին շատ հաճելի էր այդ տիտղոսը» (Մելիքյան, 1977: 91):

Ավ. Իսահակյանի և Ռ. Մելիքյանի մտերմությունը շարունակվել է Երևանում՝ մինչև Վարպետի՝ կրկին արտասահման մեկնելը: «Երբ 1930 թ. մեկնում էի արտասահման, Ռոմանոսը կայարանում ինձ ճանապարհ գցելիս համբուրեց և ասաց. «Շատ չես մնա. սպասում ենք քեզ»:

Ավա՛ղ, այդ վերջին տեսնելն էր. երբ հայրենիք վերադարձա 1936 թ., սիրելի Ռոմանոսը չկար ընկերներիս մեջ» (Մելիքյան, 1977: 91):

Ռոմանոս Մելիքյանը կյանքից հեռացել էր 1935 թվականի մարտի 30-ին...

Սակայն հայ գրականության ու երաժշտության երկու երախտավորների բարեկամության ու ստեղծագործական համագործակցության շնորհիվ ստեղծվեց երաժշտական իսահակյանապատումի բարձրարժեք էջերից մեկը՝ «Շափաղ կուտաս» ռոմանսը:

Ռոմանոս Մելիքյանի «Շափաղ կուտաս» մեներգը

Երաժշտական իսահակյանապատումի արժեքավոր էջերից մեկը՝ «Շափաղ կուտաս» երգ-ռոմանսը «Զմրուխտի» շարքից, Իսահակյանի պոեզիայի հիման վրա գրված Ռ. Մելիքյանի միակ ստեղծագործությունն է, որն առաջին անգամ բանաստեղծի համար նվագել է ինքը՝ կոմպոզիտորը: Ավ. Իսահակյանը հուզված և երախտագիտությամբ համբուրել է նրան: «Նա նվագեց ինձ համար իր «Զմրուխտյա» երգերի շարքից իմ «Շափաղ կուտաս»-ը: Ես հուզված և երախտագիտությամբ լցված՝ համբուրեցի նրան: Նա՛ ճակատի վրա ընկած մազերը թափահարեց, ձեռքով վեր բարձրացրեց և ասաց՝ «Իսկ ես որքան եմ գոհ, որ դու հավանեցիր»» (Մելիքյան, 1977: 90):

Ի դեպ՝ ութ երգից բաղկացած «Զմրուխտի» շարքը «հայ կոմպոզիտորների վոկալ պրակտիկայում առաջին շարքն է, որը վկայում է հայ պրոֆեսիոնալ երաժշտության կամերային ժանրերում մտածողության որակապես նոր մակարդակի մասին» (Григорян, 1982: 127):

Խորեն Թոռոջանի գնահատմամբ՝ ««Զմրուխտի» ժողովածուում զետեղված ութ երգերը, և, առաջին հերթին, «Մի լարը» և «Շափաղ կուտասը», իրավամբ ճանաչված են որպես մեր երգարվեստի գոհարներ: Ձևի կատարելության, պրոֆեսիոնալ վարպետության, զգացմունքների ջերմության և երաժշտական լեզվի ժողովրդայնության շնորհիվ այդ երգերը մինչև այսօր էլ պահում են իրենց թարմությունը» (Թոռոջան, 1957: 34):

Դաշնամուրի նվագակցությամբ «Շափաղ կուտաս» մեներգը՝ «Զմրուխտի» շարքի 5-րդ երգը, առաջին անգամ հրատարակվել է 1928 թվականին:

Ինչպես նկատել է Գևորգ Գյոդակյանը՝ ««Շափաղ կուտաս» երգը գրված է գուսանական արվեստում լայնորեն տարածված այն յուրահատուկ հիմն-երգերի ոգով, որոնց մեջ գովերգվում է սիրուհու գեղեցկությունը: Եվ երգի այս ժանրային առանձնահատկությունը շատ բանով բնորոշում է նրա հրճվագին, խանդավառ բնույթը:

Գուսանական երաժշտության տրադիցիաներով է գրված բուն մեղեդին. դա սկսվում է ուղղակի կուլմինացիայից, ասես միանգամից հորդած զգացմունքից երգչի շունչը բռնվել է (այդպես «աղբյուրի կատարից» սկսելը շատ բնորոշ է գուսանական հիմնային երգերի համար), և ապա «զեղում» կրքոտ, ցնծագին ինտոնացիաներով» (Գյոդակյան, 1960: 141):

Ուշագրավ է մեղեդու լայթինտոնացիան, որը երկու կցված սեկունդաների՝ փոքր և մեծացրած, տարբերակային անցկացումներն է՝ վերընթաց ու վարընթաց շարժումներով:

Շ Ա Փ Ա Ղ Կ Ո Ւ Տ Ա Ս

hous* Ա.Վ. ԻՍԱՀԱՅԱՆԻ

Allegro espansivo. (♩=152)

հա - փաղ —

briosso

sf

կու - տու ըս - դի մի ջիճ,

sf

Աշուղական երգի հետ սերտ կապը դրսևորվում է նաև աշուղների կատարողական ոճին բնորոշ մելիզմների լայն կիրառմամբ (Музыкальная культура Армянской ССР, 1985: 289):

«Լարված ու դինամիկ է զարգանում մեղեդին: Մետրական ազատ ընթացքը (իրար են հաջորդում 6/4 և 7/4) իմպրովիզացիայի հատկություններ է տալիս նրան: Միաժամանակ լադա-հարմոնիկ զարգացումը հստակորեն «կազմակերպում է» զգացմունքի այդ ազատ ու անմիջական զեղումը, զերծ պահում ճապաղությունից ու անձն «հոսունությունից»» (Գյոդակյան, 1960: 142):

«Շափաղ կուտաս»-ում կարևոր նշանակություն ունի դաշնամուրային գունեղ նվագակցությունը, որն իր իմպրովիզացիոն բնույթով «ապահովում է» աշուղական երգերին բնորոշ մթնոլորտը և անմիջապես նախապատրաստում մեղեդու մուտքը՝ հետագայում որոշիչ դեր կատարելով երգի բովանդակությունը բացահայտելու գործում: «Վառ-

վոն, փայլուն ելևէջները, որ կարծես ողողում են ամբողջ երգը, տոնայնական գունագեղ համադրումները օգնում են ճիշտ վերարտադրելու սիրուց ու կյանքից արբենալու զմայլանքի ինքնամոռաց զգացմունքը» (Գյոդակյան, 1960: 142):

Ուշագրավ է ռոմանսի հարմոնիկ լեզուն, որում առավելագույնս դրսևորվել են կոմպոզիտորի հարմոնիկ մտածողության առանձնահատկությունները, մասնավորապես՝ սուր համահնչյունների՝ այդ թվում փոքր սեկունդաների կարևոր դերը, նրա ձգտումը դեպի քրոմատիզմներն ու դիստոնանս հնչողությունը, լադային փոփոխականությունը:

Այստեղ գործ ունենք լադային յուրահատուկ փոփոխականության հետ՝ b-moll-F-dur: Ընդ որում՝ b-moll-ը ենթարկվում է ակտերացիոն փոփոխությունների (IV[#] և VII[#]), որի արդյունքում առաջանում է երկու մեծացրած սեկունդաներով կրկնակի հարմոնիկ լադը:

Ավետիք Իսահակյանի հուշերը Ռոմանոս Մելիքյանի մասին

«Հապճեպ գրած այս հուշերս մի չնչին և անարժեք խոսք է, որ ես բերում եմ հավիտյան սիրելի Ռոմանոսի այս սգալուսին, բայց ես գրում եմ հուշեր մանրամասն և ընդարձակ, որպես ընկերական անմոռաց սիրո մի սրտագին տուրք հայ երաժշտական ազգային կուլտուրայի փայլուն ու տաղանդավոր երախտավորի՝ Ռոմանոս Մելիքյանի անմահ հիշատակին:

Երևան, 1 ապրիլի, 1950 թ.»:

Այս տողերով է եզրափակել Ռոմանոս Մելիքյանի մասին իր հուշագրությունը Ավետիք Իսահակյանը (Մելիքյան, 1977: 91-92):

1950 թվականի մարտի 30-ին լրանում է Ռոմանոս Մելիքյանի մահվան 15-ամյա տարելիցը: Այդ առիթով ապրիլի 1-ին Հայաստանի կոմպոզիտորների միությունը կազմակերպում է Մելիքյանի մահվան 15-ամյակին նվիրված հուշ-երեկո, որի ընթացքում բացման խոսքով հանդես է գալիս Կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը, իսկ զեկուցումով՝ Արամ Քոչարյանը (Ասատրյան, 2017: 35): Հուշեր են պատմում Հայկանուշ Դանիելյանը, Մարտիրոս Սարյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը և Ազատ Մանուկյանը: Երաժշտագետ Ալեքսանդր Թադևոսյանը կարդում է Ավետիք Իսահակյանի հուշերը: Հաջորդում է Ռ. Մելիքյանի ստեղծա-

գործություններից կազմված համերգը (Մազմանյան, 1986: 86):

«Տասնհինգ տարի է անցել այն տխրագին օրից, երբ մենք կորցրեցինք մեր շատ սիրելի Ռոմանոս Մելիքյանին, ամենաալիրիկական հայ կոմպոզիտորին:

Հայ երգը, հայ երաժշտությունը սիրողների, նրա ընկերների համար անկարելի է հաշտվել այն ծանր կորստի հետ. դա չգոցված վերքի պես այրում է մեր սրտերը», - այսպես է սկսում իր հուշագրությունը Իսահակյանը (Մելիքյան, 1977: 89):

Այսպես՝ 1950-ին Իսահակյանը գրել է իր հուշերը Ռ. Մելիքյանի մահվան 15-ամյա տարելիցի կապակցությամբ, որը ներկայացվել է Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի կողմից՝ Ռ. Մելիքյանի հիշատակին կազմակերպված գիտական նստաշրջանում, իսկ հետագայում տպագրվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կողմից 1977 թվականին հրատարակված «Ռոմանոս Մելիքյան. հոգվածներ, նամակներ, հուշեր» ժողովածուում (Մելիքյան, 1977: 89-92):

Հուշագրության մեջ հետաքրքիր տեղեկություններ կան նրանց հանդիպումների մասին: Սովորաբար այդ հանդիպումներին ներկա էին լինում հայ արվեստի երևելի դեմքերը: «Մի երեկո Ռոմանոսը եկավ մոտս ինձ տանելու մեծատաղանդ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի մոտ. նրա ծննդյան տարեդարձն էր, ուր ներկա պիտի լիներ նաև մեծանուն կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանը:

Անմոռանալի նվիրական երեկո էր դա, մանավանդ մեր կուլտուրայի այդ նշանավոր կոթողների ներկայությունը: Հաճելի էր տեսնել, թե Ռոմանոսը ի՞նչ ակնածանքով, ի՞նչ խորունկ հարգանքով էր վերաբերվում Ա. Սպենդիարովին, այնպես, ինչպես աշակերտը իր մեծ ուսուցչին. գրեթե չէր խոսում, այլ ուշադիր լսում էր մեծ վարպետին» (Մելիքյան, 1977: 91):

Եվս մեկ հանդիպում. այս անգամ՝ Մարտիրոս Սարյանի տանը: Բնականաբար, խոսակցության նյութը կրկին հայ ազգային արվեստն էր: «Նկարչության, երաժշտության և բանաստեղծության նկատմամբ մեր հայտնած հայացքները համընկնում էին, համահնչուն ներդաշնակում էին իրար հետ: Եվ այս հոգեկան եղբայրությունը մեզ համար

հավերժացնելու մտքով, գնացինք լուսանկարվեցին միասին: Մարտիրոսը, Ռոմանոսը և ես՝ նրանց մեջտեղը»,- գրում է Իսահակյանը (Մե-
լիքյան, 1977: 91)¹:



Հուշագրության մեջ բացահայտվում են կոմպոզիտորի բնավորության առանձին գծերը: «Հայտնի է, որ Ռոմանոսը աննման առակ, անեկդոտ պատմող էր. երբ մի նոր անեկդոտ լսեր, անմիջապես ինձ պիտի հաղորդեր. առանց դրան հանգստություն չուներ:

Մի ձմռան գիշեր, երբ ես քնած էի, սենյակիս դուռը ամուր ծեծեցին, վախեցած զարթնում եմ, լսում եմ Ռոմանոսի ձայնը – «Բա՛ց, բա՛ց, հենց նոր մի հրաշալի անեկդոտ եմ լսել»...

Ես քնաթաթախ՝ բանում եմ դուռը և թեթև կշտամբանքով ասում եմ – «Տո, տունդ չքանդվի, թիփիի ես բռնվել, ինչ է»:

- Մի նեղանար, նոր եմ լսել, համբերել անկարող էի:

Հագնվում եմ մի կերպ. նայում եմ ժամացույցին, ժամը 2-ից անց է: Ռոմանոսը հեկիկ պատմում է անեկդոտը, ծիծաղում ենք, անվերջ ծիծաղում:

¹ Մեր երախտագիտությունն ենք հայտնում Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի տնօրինությանն ու աշխատակիցներին՝ լուսանկարը մեզ տրամադրելու համար:

-Ապրես, լավ արիր եկար – ասում եմ ես: Ճառագայթում է Ռոմանոսի դեմքը:

Թեյ ենք դնում, թեթև ընթրիք սարքում: Զրույց ենք անում, խոսում, կատակում: Ռոմանոսը գիշերեց մոտս. պառկեցինք կողք-կողքի: Քնել էինք գրեթե մինչև կեսօր» (Մելիքյան, 1977: 90-91):

Եզրակացություն

Այսպիսով՝ Ավետիք Իսահակյանի և կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Ռոմանոս Մելիքյանի ծանոթության ու բարեկամության արդյունքում՝

➤ ստեղծվեց երաժշտական իսահակյանապատումի ամենաարժեքավոր էջերից մեկը՝ Ռոմանոս Մելիքյանի «Շափաղ կուտաս» մեներգը «Զմրուխտի» շարքից: Իսահակյանի պոեզիային կոմպոզիտորի այս միակ անդրադարձը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես Ռ. Մելիքյանի ստեղծագործության, այնպես էլ հայ վոկալ-կամերային երաժշտության մեջ:

➤ Ռ. Մելիքյանի մահվան 15-ամյա տարելիցի առիթով Իսահակյանը թղթին հանձնեց իր հուշերը՝ կոմպոզիտորի մասին, որը մի կողմից՝ կարևոր նշանակություն ունի Վարպետի հուշագրական ժառանգության մեջ, մյուս կողմից՝ լույս է սփռում կոմպոզիտորի կյանքի ու ստեղծագործական գործունեության վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. **Ասատրյան Ա.**, Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 96 էջ:
2. Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ: Տեղեկատու, Երևան, ԱԻՏԹ հրատ., 2006, 183 էջ:
3. **Գյոդակյան Գ.**, Ռոմանոս Մելիքյան. Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1960, 245 էջ + 8 թ. նկ.:
4. **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 449 էջ:
5. **Մելիքյան Ռ.**, Հոգվածներ, նամակներ, հուշեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 231 էջ, 3 թ. նկ.:

6. **Геодакян Г.** Пути формирования армянской музыкальной классики, Ереван, Издательство Института искусств НАН РА, 2006, 352 с.
7. **Григорян А.** Армянская камерно-вокальная музыка, Ереван, Издательство АН Армянской ССР, 1982, 292 с.
8. Музыкальная культура Армянской ССР. Сборник статей. Москва, «Музыка», 1985, 398 с, нот., ил.

Ամսագրեր

9. **Թորոջյան Խ.,** Ռոմանոս Մելիքյանը և հայ երգային արվեստը, «Սովետական արվեստ», 1957, N 6, հունիս, էջ 32-40:

REFERENCES

Books

1. **Asatryan A.,** Hayastani kompozitorneri miutyun-85 [Composers Union of Armenia-85], Yerevan, HH GAA «Gitutyun» hrat., 2017, 96 ej.
2. Avetiq Isahakyan' erajhshtutyan mej [Avetik Isahakyan in music]: Teghekatu, Yerevan, AITT hrat., 2006, 183 ej.
3. **Gyodakyan G.,** Romanos Meliqyan. Kyanqy' ev steghcagorcutyuny' [Romanos Melikyan. Life and Work], Yerevan, HSSR GA hrat., 1960, 245 ej + 8 t. nk.
4. **Mazmanyan R.,** Sovetahay erajhshtakan kyanqi taregrutyun (1946-1960) [Chronicle of Soviet Armenian musical life (1946-1960)], Yerevan, HSSH GA hrat., 1986, 449 ej.
5. **Meliqyan R.,** Hodvacner, namakner, husher [Articles, letters, memoirs], Yerevan, HSSH GA hrat., 1977, 231 ej, 3 t. nk.
6. **Geodakyan G.,** Puti formirovaniya armyanskoy muzykalnoy klassiki [Ways of forming Armenian classical music], Yerevan, Izdatelstvo Instituta iskusstv NAN RA, 2006, 352 s.
7. **Grigoryan A.,** Armyanskaya kamerno-vokalnaya muzika [Armenian chamber vocal music], Yerevan, Izdatelstvo AN Armyanskoy SSR, 1982, 292 s.
8. Muzikalnaya kultura Armyanskoy SSR [Musical culture of the Armenian SSR]. Sbornik statey, Moscow, «Muzika», 1985, 398 s, not., il.

Journals

9. **Torjyan X.,** Romanos Meliqyan' ev hay ergayin arvesty' [Romanos Melikyan and Armenian song art], «Sovetakan arvest», 1957, N 6, hunis, ej 32-40.